



“ՓՈՂ ՏՈՒՆԻՔ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ.” ԳՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ ԻԶ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՄԱՅԻՍ 1, 1897

ԹԻՒ 5



պիտի սեպէին սենեակին մէջ
 փակուիլ և դաս սերտելը: Բայց
 տարակոյս չունիմ թէ երբ այս
 տղան մեծնայ մարդ ըլլայ, և
 զՂայ իր տղայութեան ժամերը
 պարագ փառնելուն վրայ, Աս-
 ուածաշունչին համարները գոց
 ընելու նուիրած ժամերը պիտի
 չըլլան անոնք: Կիրակնօրեայ
 դպրոց կ'երթաս: Երթալէդ ա-
 ուջ դասդ կը պատրաստես: Աստուածաշունչն ո՞րչափ հա-
 մարներ գոց ըրած ես:

ՏՂԱՔ ԵՒ ՏՆԱԿԱՆ ԴՈՐՈՅԻՐ
 Ինչո՞ւ տղոց կը թողուի որ տան
 մէջ նստին անգործ, մինչ ա-
 նոնց արդէն յոգնած մայրը կը
 մաքառի բնութեան և բողբոջին
 դէմ, և իր կատարել ուղած
 գործերուն հազիւ կէսին կը հաս-
 նի: Գեւ անցեալ օր տեսայ զօ-
 բաւոր կազմուածքով երեք տը-
 ղաք, որոնք ծոյլ ծոյլ կը պտը-
 տէին իրենց տանը շուրջը, մինչ
 մայրերնին, յոգնած և աժգոյն,
 կ'աշխատէր մեծ ընտանիքի մը
 գործերը կատարելու: Միթէ
 տան մէջ տղոց ընելիք գործ
 չկար: Ինչո՞ւ չկենայ: Տղան
 պնակներ չը կրնար լուալ. եթէ
 չկրնար, չը կրնար սորվիլ: Չը
 կրնար անկողին շիտկել, աւել,
 սեղան դնել, լուացք ընել, ար-
 դուկել կամ պարզ կերակուր
 մը եփել: Այո, կրնայ. և շատ
 օգուտ պիտի քաղէ այդ աշխա-
 տութիւններէն: Ամենէն մեծ օգուտը
 սա գաղափարը ունենալն է թէ մար-
 դու մը չվայլեր թողուլ որ ստակար ա-
 մանը՝ կրէ ամէն բեռ, երբ զօրաւոր
 դեռահաս ձեռքեր կարող են օգնել
 անոր: Շատ տղաք ուրախութեամբ
 պիտի օգնեն տնական գործերու, եթէ

ՅԱԶՈՐԻ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴԱՍԸ

Ինչ կը կարծէք թէ կ'ընէ այս տղան:
 Սպասաւոր տղու կամ երկրագործի
 որդիի կը նմանի որ իր փոքրիկ սեն-
 եակը քաշուած՝ գիրք մը կը կարդայ,
 զոր իր ծունկերուն վրայ դրած է
 գրասեղան չունենալուն համար: Գիրքն

է Աստուածաշունչը, և ինք յաջորդ-
 կիրակնօրեայ դասը կը պատրաստէ:
 Կարծեմ՝ Սուրբ Գիրքէն համարներ
 գոց կ'ընէ, և հիմա մէկ կողմ կը նայի
 և կը ջանայ գոց ըսել զանոնք: Անոր
 հասակակից շատ տղաք աւելի պիտի
 ընտրէին խաղալ, և յիմարութիւն

առաջարկուի իրենց և սորվին պատ-
շած կերպով գործել: Կան շատ մը
աշխոյժ տղաք որ կ'ուզեն օգնել ի-
րենց յոգնած մօր, բայց կերպը չեն
գիտեր: Փայտ, ջուր բերելէ, հաւաք-
ուած ձիւնը մաքրելէ և ճամբայ բա-
նալէ անդին չանցնիր իրենց բոլոր
գիտցածը: Երբ տղան ասոնք կ'ընէ,
մայրը կ'ըսէ որ երթայ խաղայ, մինչ
ինք կ'աշխատի, կը յոգնի: Ըսել, Տղու
գործ չէ այս: Ամօթ: Բացարձակապէս
Պատասկար է տղու մը բարոյական նկա-
րագրին՝ թողուլ որ խորհի թէ չի-
տակ բան է ծոյլ կենալ, մինչ մայրը
կը ճնշուի իր բեռներուն ներքև: Թող
տղաք օգնութիւն ընեն տան
մէջ, և այն ատեն անոնք որ
կը նեղուին խորհելով թէ
կարողութիւն չունին սպա-
սաւոր պահելու, պիտի տես-
նեն որ իրենց նեղութիւն-
ները անհետ կ'ըլլան:

ԱՐ ԲԻՉԱՐՍ ՕՐԸ

Սըր Բիչըրտ Օրն, որ ասկէ
հինգ տարի առաջ մեռաւ,
դարուս ամենէն նշանաւոր
գիտուններէն մէկն էր: Ե-
րիտասարդութեան ատենը
Բաղդատական Անգամազն-
նութիւն սորվեցաւ ի փարիզ
մեծահամբաւ փիւփիէէն, և
թէպէտ շատ գիտութիւններ
ու հմտացաւ, բայց իր ու-
շագրութիւնն աւելի տուաւ
Անգամազնութեան և Բնա-
պատմութեան: Բաղմութիւ
յօդուածներ ունի գրագի-
տական և ուսումնական
թերթերու և հանդէսներու
մէջ: Այդ յօդուածներէն
չատերը յերևան կը բերէին
պատուական գիւտեր և

պարտիւք ընծայել Տիեզերքի Վեհա-
պետին, որով կ'ապրինք և կը շար-
ժինք ու կանք," ըսած է:



ԹՈՂՈՒՆԸ ԵՒ ՄԱՐԴԻ

Տիք Ուիլթըն գեղձանիկներու (Գ-
նաբե- Գ-նաբե-) խենթ էր: Մեծ վանդակ
մը ունէր, և շատ մը ձագեր հանեց և
ամէնքն ալ ուրիշներու տուաւ, բայց ի
մէկէն որուն վրայ մասնաւոր սէր ու-
նէր: Ինքը անոր վրայ հսկած էր այն
օրէն սկսելով երբ նա փոքրիկ կապոյտ
հաւկիթի կեղևը կտորելով մէջէն դուրս
ելաւ, և վերջուց իր տգեղ փոքրիկ
գլուխը՝ ընդունելու համար կերակու-

ամէն օր մէկ երկու ժամ դուրս կը
թողուր զանիկա վանդակէն: Բայց երբ
տղան աղուոր պատառ մը կը բռնէր
վանդակին թելերուն դէմ և գուրգու-
րանքով կը կանչէր թռչունին, սա
մէկդի կը թռչէր յիմարական վախով
կամ վերի թռանոցին վրայ կը մնար
էրբ թէ իր տէրը բոլորովին օտարա-
կան մը եղած ըլլար:

Վերջապէս տղան տեսնելով որ ամէն
միջոց պարագ ելաւ, սիրաբ նեղացաւ
և խստութեան դիմեց: Վերջուց հուն-
տին պնակը, և կամակոր դեղձանիկը
առանց կերակոյ թողուց քսանըչորս
ժամ: Յետոյ անգամ մըն ալ մօտեցաւ
վանդակին, հունտ մը բռն-
նելով երկու մասններուն
մէջտեղը: Գեղձանիկը վայր-
կեան մը վարանելէ ետքը
խոնարհեցաւ: Տիքի մատ-
ներէն փափաքով կտցեց
հունտը, յետոյ ուրիշ մը,
յետոյ ուրիշ մը, կտոր մը
բարեւ և ուրիշ կեր: Տիք
յաղթեց, և թռչունը ճանչ-
նալով թէ ուրիշ կու գար
բոլոր իր վայելած բարեք-
ները, այդ ժամէն սկսաւ
վանդակին մէջ բանտար-
կեալի պէս չըլլալ, հապա
սերտ բարեկամ իր տիրոջը.
իր կերակուրը անոր ձեռքե-
րէն կ'ընդունէր, թռչտելով
անոր դէմը կ'ելլէր և իր
ամենէն քաղցր երգերը
կ'երգէր երբ որ Տիքի ոտ-
քերուն ձայնը առնէր սան-
դուխին կողմէն:



Տարիներ անցան, և Տիք
եղաւ Պատուարժան Բիչըրտ
Ուիլթըն, մեծ երկաթուղիի
մը նախագահը, հարուստ

իր զոր պատրաստած էին Տիք և իր
խանդակաթ մայրը: Չագին փե-
տուրները եկան զարգացան և ինքն
եղաւ զորաւոր գեղեցիկ փետուրներով
թռչուն մը. և անոր տէրը Տիք շատ
ժամանակ կու տար և միտք կը յօգ-
նեցնէր զանի կերակրելու և անոր ու-
րիշ ամէն պէտքերը հոգալու:

Տիքի մի միայն ցաւ այն էր որ թըռ-
չունը բոլորովին անզգայ էր ցուցուած
սիրոյն: Տիք ի զուր այնքան հունտ,
բարեւ և կուտաւ (Գ-նաբե- Գ-նաբե-) կու
տար. թռչունը բոլորովին անտարբեր
կը մնար անոր նկատմամբ: Ամէն ա-
ռուստ իր կերակուրը կ'ընդունէր իր-
րեւ իր իրաւունքը: Մենեակին մէջ հոս
հոն կը թռչտէր այն միջոցին որ Տիք

և ամենուն յարգելի: Բայց իր յաջո-
ղութեան մէջ մոռցաւ Լուսոյ Հայրը
որմէ կ'իջնէ ամէն բարի և կատարեալ
պարգև: Կրօնքը ծաղրող մը չէր, բայց
անհոգ էր կրօնքի մասին: Իր մէկ փա-
րան չմտաւ իր Տէրօջը գանձատունը,
ոչ ալ երախտագիտական մտածու-
թիւն մը ունեցաւ իր երկնաւոր Հօրը
վրայ:

Բայց փոփոխութիւն մը տեղի ունե-
ցաւ: Տեսեալական մեծ տաղնայ մը
եկաւ առևտրական աշխարհին վրայ:
Երկաթուղին երկնցնելու ձեռնարկը
չյաջողեցաւ. նոյն իսկ իրենց երկա-
թուղիին եկամուտը պակսեցաւ ուրիշ
և աւելի աղէկ երկաթուղիի մը շինուե-
լուն պատճառաւ, որ վերջապէս իրեն-

ցին տեղը բռնեց: Գրամագլուխը պակ-
սեցաւ, պակսեցաւ, մինչև որ առա-
ւօտ մը հրատարակուեցաւ թէ ընկե-
րութեան հաշիւները պիտի նայուին,
և թէ անոր նախագահը, Պատուարժան
Բիչըրտ Ուիլսըն, սնանկացած է:

Տիք աղքատացած, վհատած, կեան-
քէն ձանձրացած և գրեթէ յուսա-
հատ, կը նստէր իր սենեակին մէջ և
անցեալ ժամանակին վրայ կը մտա-
ծէր: Մեքենայէս ելաւ տեղէն, քա-
չեց գզրոց մը որ իր մանկութեան ժա-
մանակի յիշատակներ կը պարունա-
կէր: Աչքին դպաւ փորրիկ
դատարկ սերմի ամանը, և
փայլակի մը պէս իր առջև
տարածուեցաւ իր կեանքին
պատմութիւնը և նշանակու-
թիւնը:

«Տէրը տուաւ, Տէրը ա-
ռաւ,» մրմնջեց իր ծունկե-
րուն վրայ ինկած՝ շատ տա-
րիներու մէջ առաջին ան-
գամ ըլլալով:

Տիք հիմա ծերունի մըն է:
Հարուստ չէ, բայց մխի-
թարուելու նիւթական բա-
ւական միջոցներ ունի այն-
պէս որ կեանքն հաճելի ըլ-
լայ, և իր բարեկամները
կ'ըսեն թէ երեսը շատ զու-
արթ է: Վասն զի վերջա-
պէս դատած է իր Հայրը, կամ
մանաւանդ հասկցած է թէ
ինք բոլոր ժամանակին մէջ
անծանօթ էր իր Հօրը տան
մէջ, և թէ այն սիրող Չեռ-
քը զոր հիմա կը սեղմէր,
և որ «խտաւէտ արօտնե-
րու մէջ և հանդարտ ջուրե-
րուն քովը կ'առաջնորդէ»,
երկնցած էր օգնելու իրեն՝
բոլոր այն հպարտութեամբ
և դատարկութեամբ անցու-
ցած և կորսնցուցած տա-
րիներուն մէջ:

Չմեռը այս ջրվէժէն ինկած փրփու-
րը կը սառի և կամայ կամայ կը ձե-
ւանայ ահագին կոն մը որ ձմեռ-
ուան կիսուն 70—80 ոտք կը բարձ-
րանայ: Այս սառչոյցին վրայ սան-
դուղի աստիճաններ կը փորուին, ու
րոնց վրայ կոխելով վեր՝ գագաթը
կ'երկն մարդիկ և տղաք, իրենց հետ
տանելով փոքրիկ բալիսիրներ, որոնց
վրայ հեծնելով արագ մը վար կը սա-
հին և կ'անցնին մինչև սառչոյցին միւս
կողմը: Այս սաստիկ արագութիւնը
զանոնք շատ հեռուն կը տանի վարը



եղածէն աւելի բարձր կը համարի, և
ինքզինք այնչափ իմաստուն կը կարծէ
որ պէտք չտեսներ սորվելու, և ինքն-
իրեն այնպէս հաւանած է որ խրատի,
խորհուրդի պէտք չզգար, անտարա-
կոյս շատ պիտի ցաւի ետքը: Կարելի
է թէ յաջողի կարճ ժամանակ մը.
Բայց անկումը պիտի գայ վերջապէս:
Ով որ իր իրաւունքէն աւելի բան կը
պահանջէ, իրեն իրաւացի փտահու-
թիւնը չվայելեր: Չափէն աւելի բարձ-
րերը կը նայի, և կը կորսնցնէ ինչ որ
պիտի շահէր եթէ այդպէս չընէր:
Երբ ուրիշները կ'անարդէ,
կը կորսնցնէ վերջապէս յար-
զը և պատիւը որ պիտի
վայելէր եթէ խոնարհ ըլլար:

Մեր մեծ Ուսուցիչը որ
կ'առաջնորդէ մարդիկը կե-
նաց ճամբուն մէջ, ըսաւ,
«Իմ լուծս ձեր վրայ առէք,
և ինծմէ սորվեցէք՝ որ հեզ
եմ ու սրտով խոնարհ, և
ձեր անձերուն հանգստու-
թիւն պիտի գտնէք:» Երբ
ամէն մէկս խոնարհութեան
դասը սորվինք, այն ատեն
կը տեսնենք մեր սխալնե-
րը և յիմարութիւնները, և
մեր անձերէն լաւ կը սե-
պենք ուրիշները: Այն ա-
տեն կընանք յուսալ թէ օգ-
տակար պիտի ըլլանք աշ-
խարհիս մէջ, բարիք պիտի
ընենք ուրիշներու, և վեր-
ջը մենք ալ բարիք պիտի
գտնենք:

«Փառաց առջևէն խոնար-
հութիւնը:» Ով որ խոնարհ
է, գիտէ իր պակասութիւն-
ները: Կը փափաքի սորվիլ,
կը բաղձայ շիտկել իր ճամ-
բաները: Հպարտը իր կա-
րօտ ըլլալը չտեսներ, ուս-
տի ուշադրութիւն չընէր ու-

գտնուող սառած տափակ մակերեսին
վրայէն:

ԽՈՆԱՐՀՈՒԹԻՒՆ

Չենք կրնար գիմացկուն տուն չի-
նել անհաստատ հողի վրայ: Պէտք է
որ հիմը դնենք ցածը, փոշիին տակը:
Այսպէս ալ չենք կրնար չինել ազնիւ
նկարագիր առանց դնելու անոր հիմը
խոնարհութեան մէջ, համեստութեան
մէջ, Հպարտութիւնը և սնտիառու-
թիւնը արդելք են ամէն ճշմարիտ յա-
ռաջդիմութեան և յաջողութեան: Ով
որ գուռոզ ոգի ունի, և ինքզինք իր

րիշներուն բաղձանքներուն և մտածու-
թիւններուն, հապա՛ ոտքին տակ կը
կոխկուտէ անոնց իրաւունքը, իր ուզա-
ծը կ'ընէ և ուրիշներուն համար երբեք
հոգ չընէր: Ուստի թշնամի կը շատ-
ցընէ, բարեկամներ կը կորսնցնէ, և
ետքը բան չմնար ձեռքը: Ով որ խո-
նարհութեամբ և ազնուութեամբ կը
վարուի, բարեկամներ կը գտնէ ուր
ալ երթայ: Ամենէն վար տեղը կը
բռնէ, մինչև որ կ'ըսուի իրեն, «Վեր
հրամէ:» Գոհ կ'ըլլայ իր վիճակէն,
մինչև որ կերպով մը լաւ կամ պայ-
ծաւ դիրք մը ունենայ: Ուրիշներու

ՄՈՆՔՄՈՐԷՆՍԻԻ ԶՐՎԷԺԸ

Քանատայի Գուիպէք քաղաքէն
ութ մըն վար Մոնթմորէնսի անուն
փոքրիկ դետը կը թափի Սբ. Լաւրեն-
տիոս վիթխարի գետին մէջ, և ճիշդ
բերնին վերեւը կը տեսնուի այս գե-
ղեցիկ ջրվէժը: Այս ջրվէժին ջուրը
քիչ է բաղդատելով նիակարայի ջըր-
վէժին ջուրին հետ, բայց առջինին
ջուրը շատ մը աւելի վերէն կը թափի.
վասն զի բարձրութիւնը 230 ոտք է:

վրայ քիչ պակասութիւն կը գտնէ, մինչև անդամ եթէ ինք բանի տեղ չդրուի կամ արհամարհուի, վասն զի իր անձին վրայ քիչ արժէք կը դնէ, և չպատահեր որ մարդիկ զինք պատուեն: Այսպիսի մէկը օրհնութիւն է աշխարհի. բայց անոնք որ հպարտ, սնափառ, իրենքիրենց հաւնող և կամակոր են, քիչ օգտակար կ'ըլլան ուրիշներուն. և շատ քիչ օրհնութիւն կը վայելեն: Չափազանց փափաքներ ունին, բայց իրենց ձեռքը բան չանցնի որ ամէն բան կը կորսնցնեն: Աստուած ային նախախնամութեան գութութիւնները իրենց դէմ կ'եղեն, ինչու որ «Աստուած ամբարտաւաններուն հակառակ կը կենայ»: Եւ երբ բարկութեան օրը գայ, «Բոլոր հրպարանները և բոլոր ամբարշտութիւն ընողները յարդէ պէս պիտի ըլլան. ու գայրու օրը զանոնք պիտի այրէ, կ'ըսէ զօրաց Տէրը, այնպէս որ անոնց արմատ կամ ոստ պիտի չթողու»: Մաղ. Գ. 1: Բայց անոնք որ խոնարհ են, հեղ են, սրտով մաքուր են, ստովելու պատրաստ են, և իմաստուն են Աստուծոյ իմաստութիւնովը, այդ օրը պիտի գտնեն օրհնութիւն և պատիւ, և մեծ վարդապետէն պիտի լսեն, «Ապրիս» բառը, և պիտի մտնեն իրենց Տէրոջը ուրախութեանը մէջ:

ԱՇԽԱՐՀԻՍ ԱՄԵՆԵՆ ՊԱՅՅՄԱՌ ԲԱՆԸ

Օր մը դպրոցական ժամերէն ետքը վարժապետ մը իր գրասեղանէն հանց հին երևոյթով տուփ մը որուն վրայ թռչուններ նկարուած էին: Աշակերտները գրասեղանին քով կանչեց և ըսաւ թէ անոնց ամէն մէկուն համար մէյմէկ փոքրիկ ընծայ բերած էր: Երբ տղաքը իր չորս կողմը առին, տուփին մէջէն քանի մը ձերմակ և կարմիր խեցեղատեաններ (ոստրէի ևն. կեղև) և քանի մը գեղեցիկ խաղաղիկներ հանեց և անոնց տուաւ քաղցր և հաճելի խօսքեր ըսելով:

Բայց այդ ընծաներուն մէջ ամենէն սիրուն էր հրեշտակի մը փոքրիկ արձանը: Հրեշտակը կայնած էր իր փոքրիկ ձերմակ ձեռքերը կուրծքին վրայ ծալած, երեսը վեր վերցուցած, և այնպէս գեղեցիկ, այնպէս մաքուր կ'երևնար որ տղաքը անոր վրայ կը նայէին բերկրութեամբ և հրաշմամբ: Անոր պէս բան երբեք տեսած չունէին:

«Այս փոքրիկ հրեշտակը այնպէս սիրուն է որ չընար տրուիլ տղի մը որ բարի և շիտակ սիրտ չունի: Բայց ով որ վաղն առտու ինձի բերէ երկրիս վրայ ամենէն պայծառ բանը, հրեշտակը անորն է,» ըսաւ վարժապետը:

Տղաքը իրարու երեսնայեցան, ցուցնելով թէ հասկցած չէին վարժապետին ըսածը: Բայց նա ուրիշ բան չըսաւ, և աշակերտները տուն գացին:

Հետեւեալ օրը դասերուն լմնալէն ետքը տղաքը վարժապետին բոլորափորձ հաւաքուեցան, իրենց բերածները ցուցնելու համար: Մէկը ճամբուն քովերէն փայլուն քարեր փրցուցած էր. մէկը պղտոր կտոր մը արծաթ ա՛յն պէս փայլեցուցած էր որ հայելիի կը նմանէր, մէկը բերած էր ժամացոյցի մը ապակին զոր հայրը տուած էր իրեն, և Օննիկ, վաճառականի մը տըղան, կուրծքի գնդառեղ մը բերած էր կեղբոնը քարով մը որ աղամանի պէս կը շողջողար:

«Ո՛հ, իմ ամենէն փայլունն է,» պոռաց Օննիկ: «Բայց մ'ըր է փոքրիկ Արսէն,» հարցուց վարժապետը, չորս կողմ նայելով. «բան մը չե՞ք կրնար ընել մինչև որ Արսէն չբերէ իրենը:»

Այդ վայրկեանին փոքրիկ Արսէն, հացագործին միակ որդին, վաղելով ներս եկաւ: Ձեռքը ձիւնի պէս ձերմակ աղանի մը բռնած էր սիրուն կերպով իր պարանոցին դրած: Աղանիին կուրծքի նուր փետուրներուն վրայ տեսնուած արիւնի քանի մը կաթիլները կը ցուցնէին թէ վերջ ընդունած էր թռչունը:

«Ո՛հ, վարժապետ,» աղաղակեց Արսէն, «պայծառ բան մը կը փնտռէի, և այս խեղճ աղանիին հանդիպեցայ: Քանի մը շար տղաք քար կը նետէին անոր, և ես չտուով մը բռնեցի զանիկա և հոս յուզեցի: Ո՛հ, կը վախնամ թէ պիտի մեռնի:»

Արսէնի խօսած ժամանակը աղանին խփեց իր փափուկ աչքերը, աւելի փարեցաւ Արսէնի պարանոցին, վար դրաւ իր փոքրիկ գլուխը և մեռաւ: Արսէն ծունկի վրայ եկաւ վարժապետին գրասեղանին քով, և իր աչքերէն աղանիին կտորած թևին վրայ ինկան արցունքի երկու կաթիլներ խոշոր և պայծառ:

Վարժապետը անոր ձեռքէն առաւ մեռած թռչունը և փափուկութեամբ դրաւ իր գրասեղանին վրայ: Յետոյ աշակերտներուն դառնակով ըսաւ, «Տղաք, երկրիս վրայ դժութեան փափուկ զգացումով թափուած արցունքէն աւելի պայծառ բան չկայ:»

«Չերմակ հրեշտակը փոքրիկ Արսէնի տուէք,» գոչեցին տղաքը: «Մենք հիմա հասկցանք թէ ինչ բան կ'ուզէիք. անոր բերածը մեր բերածներէն աղէկ է:»

ՄԱՅՐ ԲԱՆԿԱՌՈՒՆ

Հետագայ պատմութիւնը Աւստրալիայէն եկած է, ուր ամէն մարդ տեսած քանկարուն կը զարնէ, ինչպէս որսորդները կը զարնեն եղջերուները և այծեամբները:

Մարդուն մէկը իրիկուն մը իր ազարակի տան պատշգամբ (շահիշ) նստած էր, և ահա զարմանքով տեսաւ որ քանկարու մը այն տեղերը կը պտրտէր. մէյմը կը մտանար տանը, մէյմը կը հեռանար, իբր թէ տարա-

կուելով և վախնալով թէ ինչ ընելու էր: Վերջապէս ջուրի դոյլերուն քոֆու եկաւ, և ձագ մը հանելով իր փորին տակը գտնուած պարկէն, ջուրին քով բռնեց որպէս զի ձագը խմէր:

Մինչ ձագը իր ծարուր կը յաղեցընէր, մայր քանկարուն բոլոր ժամանակը կը դողար յուզումէն, վասն զի միայն քանի մը ոտք հեռու կը դատնուէր պատշգամբն որուն վրայ իր մեծ թշնամիները նստած զինքը կը դիտէին: Ձագին ջուր խմելը լմնալէն ետքը, մայր քանկարուն նորէն պարկը դրաւ զանիկա և մէկդի վազեց արագ արագ:

Եթէ քանկարուն ընական երկչուտութիւնը ի նկատ առնուի, կը հասկըցուի թէ ինչ հիմնային քաջութիւն ցուցուց այդ կաթողին սէր ունեցող մայրը: Հաճելի է այս պատմութիւնը վերջացնել սա իրողութիւնն աւելցընելով թէ ականատես անձը այնպէս զգածուեցաւ այն տեսարանէն որ այդ ժամանակէն սկսեալ ալ երբեք քանկարու չզարկաւ:

ՇԻՇԵՐԻՆ ՆՈՒԱԳԱՐԱՆ

Շատ դիւրին է շինել շիշերէ նուագարան, այնպէս որ անոնցմով եղանակներ զարնուին: Պէտք է երկու աթոռ, երկու երկայն ձող և տասներու թ շիշ: Աթոռները իրարմէ ձողերուն երկայնքին չափ հեռու դիր, կռնակները իրարու դարձուցած: Չողերուն վրայ կախէ իննական շիշ՝ պարանոցներէն լարով կապուած: Լարին ծայրը պէտք է այնչափ մեծ օղակ մը ձևացնել որ ձողին վրայէն սահի: Չողին մէկը աթոռներուն նստելու տեղին վրայ դիր, և միւսը յիւսարանին գագաթը: Իբրև մուրճ կրնայ ծառայել դրեթէ ունէ փայտիկ որով զարնես շիշերուն: Արագ նուագելու համար երկու փայտիկ պէտք է դործածել: Եթէ շիշերն ամէնն ալ նոյն ձևը և նոյն մեծութիւնն ունին, ձայները կրնան երաժշտական բոլոր խաղերուն սատար ձաններուն յարմարցուիլ, անոնց մէջ ջուր լեցնելով: Արչափ շատ ըլլայ լըցումով ջուրը, այնչափ ցած կ'ըլլայ խաղին սատիճանը: Եթէ շիշերը տարբեր տարբեր ձևեր ունին, ջուրը զանազան քանակութեամբ լեցնելով կարելի է խաղերը յարմարցնել: Կարելի չէ ըսել թէ որչափ ջուր լեցնել պէտք է. վասն զի ապակիին թանձրութեան նպաստով պէտք է լեցնել ջուրը: Ուրիշ շիշեր կրնաս գործածել զանազան կերպով: Կարելի կրնան չափ մէկը ծայրէն, մէկը միւս ծայրէն:



Ամերիկայի Մ. Մ. Մ. Պատմութեան կողմէն, Ար. Պատմութիւնը, ԿԻՐԻՆ Տնօրէն, Մարտի 2-Պ. ՊԱՐԵՍՄ Ֆինանսները Եղբուր, Ամերիկայի Խան

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
Ի ՅՊԱՐԱՆԻ Ա. ՅԱՅՐ ԳՅՈՍԵՅԱՆ